9924

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

334.7
Կ-21

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ս. Պ. Եղիազարեանցի, Մաղաքեան փ. № 5.
1907

Н Арм. 2-4722
334.7
Կ-21

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

2010
2001

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀՆԵՐՄԻՍ» Մ. Պ. Եղիզարեանցի, Մադաթեան փ. № 5.
1907 (4)

По журнальному постановленію Тифлисскаго Губернскаго по дѣламъ объ обществѣ Присутствія 31 іюля 1907 года «Общество взаимопомощи купцовъ г. Тифлиса» внесено въ реестръ подъ № 10, настоящій уставъ утвержденъ и къ возникновенію дѣятельности означеннаго общества препятствій не встрѣчается. Августа 1 дня 1907 года.

И. д. Тифлисскаго Губернатора
И. д. Вице-Губернатора *Чернявскій.*

44509-ահ-

ՀՍՍՌ-Ադամ.ՍՍՌ
Ա. Մ. Գորկու անվ.

29474-63

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ա. Ընկերութեան նպատակը

§ 1. Ընկերութեան նպատակն է.

ա) Իւր այն անդամներին, որոնք անբարեյաջող հանգամանքներից կարիքի մէջ են ընկել, օգնութեան հասնել։

բ) Ընկերութեան միջոցների ներածին չափ աշխատել կրեդիտ բաց անել կարիք ունեցող անդամների համար և նրանց վերահաստատել կրեդիտի մէջ։

գ) Ընկերութեան անդամների և կողմնակի անձանց մէջ հարթել առևտրական յարաբերութիւնները, հիմնելով միջնորդ դատարաններ և այլ հաշտութեան կամերաներ, հանգամանքներին նայած, խոյս տալու դատաստանական թանգ նստող պրոցէսներից։

դ) Իւր անդամներին սպառնացող ամեն տեսակ վտանգից պաշտպանել օրէնքներով թոյլատրւած բոլոր միջոցներով։

ե) Օգնել մեռած անդամի ընտանիքին, եթէ նրա մահից յետոյ միջոցներ չեն մնացել։

§ 2. Ընկերութեան օգնութիւնը կայանում է.

ա) Տալով կարիք ունեցող անդամներին փող, շոր, կերակուր և բնակարան, նմանապէս թաղելով մեռած անդամներին։

բ) Տալով մեռած անդամների որբ երեխաներին որ և է կրթական հիմնարկութիւն։

գ) Մտնելով բանակցութիւնների մէջ այն անձնաւորութիւնների և ֆիրմաների հետ, որոնց հետ ըն-

կերութեան կարիքի մէջ գտնուող անդամները յարաբերութիւնների մէջ են գտնուում։

դ) Որոնելով միջոցներ այն անձնաւորութիւնների դէմ, որոնք զանազան միջոցներով աշխատում են փող դուրս կորզել ընկերութեան անդամներից և այդ միջոցները գործադրելով։

Բ. Ընկերութեան գործունէութեան շրջանը եւ նրա իրաւունքները։

§ 3. Ընկերութեան գործունէութիւնը սահմանափակւում է Թիֆլիզով։

Ծանօթ. Ընկերութեան հիմնադիրներն են՝ Թիֆլիսի վաճառականներ՝

1. Արկադիյ Նազարեան Միլեան (Պասկևիչի փող. տուն Խարազեանի)
2. Բարսեղ Սարգսեան Եղիազարեան (Վելեամինովսկայա փող. սեփ. տուն)
3. Գէորգ Գաբրիէլեան Շադինեան (Միքայէլեան պրոսպ. տուն Իսարլովի)
4. Յովհաննէս Գրիգորեան Կաճկաճեան (Բեհբութեան փող. սեփ. տուն).
5. Արշակ Յարութիւնեան Կոնդախսազեան (Հալաբար, Զարաբաշս. փող., սեփ. տուն).

§ 4. Ընկերութիւնն ունի կնիք «Թիֆլիսի վաճառականների փոխադարձ օգնութեան ընկերութիւն» մակագրութեամբ։

§ 5. Իր միջոցները ընդարձակելով ընկերութիւնն իրաւունք ունի՝

ա. Ձեռք բերել ամեն տեսակ շարժական և անշարժ կայք և այն ընկերութեան սեփականութիւն դարձնել, կայքը գրաւ դնել, կնքել փոխառութիւններ և կապել ամեն տեսակ ակտեր, պայմաններ, համաձայնութիւններ, նմանապէս պաշտպանել ընկերութեան

շահերը իր լիազօրների միջոցով պետական բոլոր հիմնարկութիւններում և վարչական հիմնարկութիւնների պաշտօնական անձնաւորութիւնների առաջ։

բ. Պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ, կատարելով այդ հիմնարկութիւնների մասին եղած կառավարութեան բոլոր օրէնքներն ու կարգադրութիւնները, բաց անել ճաշարաններ, գրադարաններ, հրատարակել իր սեփական լրագիր։

գ. Իշխանութեան թոյլտուութիւն վերցնելով կազմակերպել հրապարակական դասախօսութիւններ, գրական երեկոյթներ և այլն։

Գ. Ընկերութեան կազմը

§ 6. Ընկերութեան կազմը անորոշ է, նրա մէջ մտնում են առանց սեռի և ազգութեան խարութեան վաճառականական դասակարգին պատկանող անձնաւորութիւնները։

§ 7. Ընկերութեան անդամները լինում են պատուաւոր և իսկական։

§ 8. Ընկերութեան պատուաւոր անդամներն են այն անձնաւորութիւնները, որոնք ընկերութեան տալիս են մեծ նուիրատուութիւններ կամ որոնք ընկերութեան համար կատարում են ուրիշ կարևոր ծառայութիւններ։ Դրանց ընտրում է ընկերութեան ընդհանուր բողովը։

§ 9. Իսկական անդամներն են.

ա. Այն անձնաւորութիւնները, որոնք ընկերութեան դրամարկղին տալիս են ամսական ամենաքիչը մէկ ռուբլի կամ միանգամ տալիս են ամենաքիչը հարիւր յիսուն ռուբլի։

Ծանօթ. I Իսկական անդամ գրուելու համար հարկաւոր է ընկերութեան նախագահի բերանացի յայտարարութիւնը, ներկայացնելով հասանելիք անդամակցական վճարը։

Ծանօթ. II Այն անձնաւորութիւնները, որոնք ի-

բանց ձրի աշխատանքով ծառայում են ընկերութեան նպատակներին, օր. որոնք պատրաստակամութիւն են ցոյց տալիս ընկերութեան հովանաւորութեան տակ գտնուած չքաւորներին իրանց խնամատարութեան տակ առնելու կամ որոնք յանձն են առնում մեռած անդամների որբ ընտանիքների գործերը վարելու, — դրանք կարող են ընկերութեան անդամ դառնալ, ընդհանուր ժողովի գաղտնի քուէարկութեամբ ընդունած որոշման համաձայն, առանց որ և է անդամակցական վճար տալու։

§ 10. Այն իսկական անդամները, որոնք մինչև հաշուետուական տարուայ վերջը չեն տուել իրանց անդամակցական վճարը, համարւում են ընկերութեան կազմից հեռացած։

§ 11. Ընկերութեան սկզբնական կազմի մէջ մտնում են հիմնադիրները, որոնք կանոնադրութիւնը հաստատելուց և դրան հետևող ընդհանուր ժողովից յետոյ կրում են պատուաւոր կամ իսկական անդամների կոչումը, նայած իրանց յանձն առած պարտականութիւններին։

§ 12. Այն անդամը, որը իր գործողութիւններով վնասում է ընկերութեանը, ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է ընկերութիւնից հեռացուել։

Դ. Ընկերութեան միջոցներ

§ 13. Ընկերութեան միջոցները կազմում են։

ա) Անդամակցական վճարներ։

բ) Ընկերութեան դրամագլխի ու շարժական և անշարժ կայքերի եկամուտները։

գ) Ընկերութեան անդամների, մասնաւոր անձնաւորութիւնների և զանազան հիմարկութիւնների նուիրատուութիւնները, ինչպէս փողով, այնպէս էլ առարկաներով, նմանապէս կտակներով։

դ) Ընկերութեան կազմակերպած հասարակական և գրական դասախօսութիւններից գոյացած եկամուտները։

ե) Իր հրատարակած լրագրի և բացած գրադարանի եկամուտները։

Ծանօթ. Ընկերութեան ստացած բոլոր գումարների և առարկաների համար պահւում է մանրամասն ցուցակ և նրանց գործադրելու հաշուետուութիւնը։

§ 14. Ընկերութեան ստացած բոլոր գումարները բաժանւում են չորս մասի՝ հիմնական, պահեստի, մասնաւոր և ծախսերի դրամագլուխներ։

§ 15. Հիմնական դրամագլուխը կազմում է ընկերութեան մշտական եկամուտները ապահովելու համար և գոյանում է ընկերութեան դրամարկղը մտած բոլոր գումարների 10%-ից, ի բաց առեալ մասնաւոր գումարները։

§ 16. Պահեստի դրամագլուխը նմանապէս գոյանում է ընկերութեան ստացած բոլոր գումարների 10%-ից, ի բաց առեալ մասնաւոր գումարները, իսկ ծախսւում է ընդհանուր ժողովի որոշման համաձայն ընկերութեան արտակարգ կարիքների համար։

§ 17. Մասնաւոր դրամագլուխը կազմում է այն նուիրատուութիւններից, որոնք, նուիրատուների կամքի համաձայն, կարող են ծախսւել միայն որոշ կարիքների համար։

§ 18. Մնացած բոլոր գումարներից գոյանում է ընկերութեան ծախսերի դրամագլուխը, որը գործ է դրւում ընթացիկ ծախսերի համար։

§ 19. Ընկերութեան դրամագլուխները շատոնալով ձեռք են բերւում պետական կամ կառավարութեան ապահովագրած տոկոսաբեր թղթեր, որոնք պահւում են պետական բանկում կամ այն խնայողական դրամարկղներում, որտեղ բանկային օպերացիաներ են կատարւում։ Այնտեղ է պահւում նաև ընկերութեան ծախսերի դրամագլուխը ընթացիկ հաշուով։

Ծանօթ. Գանձապահի ձեռքի տակ կարող է մնալ միայն մի չնչին գումար մատակայ և անհրաժեշտ ծախսերի համար, որի չափը որոշում է ընդհանուր ժողովը։

§ 20. Ընկերութեան գումարները կարելի է ծախսել միայն ընդհանուր ժողովի թոյլտուութեամբ։ Այդ ծախսերը որոշած են լինում կամ ընդհանուր ժողովում հաստատած նախահաշիւներով կամ առանձին ժողովների որոշումներով։

Տանօթ. Բացառիկ դէպքերում վարչութեան նախագահը կարող է նպաստներ տալու հարցերը վճռել իր պատասխանատուութեամբ՝ զեկուցանելով այդ մասին առաջիկայ վարչութեան ժողովին։ Այդ նպաստների չափը որոշում է ընդհանուր ժողովը։

Ե. Ընկերութեան գործերի կառավարելը

§ 21. Ընկերութեան գործերը վարում են՝ 1) ընկերութեան վարչութիւնը և 2) անդամների ընդհանուր ժողովները։

I Ընկերութեան վարչութիւնը

§ 22. Վարչութիւնը գտնւում է Թիֆլիսում և բաղկացած է ընկերութիւնից ընտրած հինգ անդամից։ Այդ թւով ընտրւում են և փոխանդամներ որ և է անդամի հիւանդութեան կամ Թիֆլիսից բացակայելու ժամանակ փոխարինելու համար։ Թէ վարչութեան անդամները և թէ նրանց փոխանդամները ընտրւում են մէկ տարի ժամանակով ընկերութեան այն իսկական կամ պատուաւոր անդամներից, որոնք մշտական ապրում են Թիֆլիսում։

§ 23. Վարչութեան անդամներն իրանց միջից ընտրում են մի նախագահ և մէկ քարտուղար։

§ 24. Վարչութեան բոլոր անդամները ընկերութեան գործերը վարում են ձրի։ Վարչութեան նախահաշիւ համաձայն ընդհանուր ժողովը որոշում է կանոնաւորական ծախսերի համար անհրաժեշտ գումարներ։

§ 25. Վարչութեան ժողովները գումարւում են նախագահի հրաւէրով, կարիքին նայած, բայց ոչ պակաս քան ամիսը չորս անգամ։

§ 26. Ժողովը կանոնաւոր է համարւում, երբ ներկայ են վարչութեան անդամների ոչ պակաս քան կէս մասը, որի թւում նախագահը կամ նրա փոխանորդը։

§ 27. Վարչութիւնը իր վճիռները կայացնում է ձայների հասարակ մեծամասնութեամբ, իսկ երբ ձայները հաւասար են, առաւելութիւն է տրւում այն մասին, որին տալիս է նախագահը իր ձայնը։

§ 28. Վարչութեան պարտականութիւններն են.

ա) Վարչութեան անդամների պարտականութիւնների կարգաւորութիւնը, իրար մէջ փոխադարձ համաձայնութիւն կայացնելով։

բ) Ընկերութեան միջոցները մեծացնելու հոգատարութիւնը և ձգտել իրագործելու նրա նպատակները։

գ) Ընկերութեան կայքերն ու դրամագլուխներ կառավարելը։

դ) Ընկերութեան հիմնարկութիւններ կառավարելը և նրանց մէջ ծառայողների համար որոշել հրահանգներ, նմանապէս կանոնադրութիւն։

ե) Ընկերութեան հիմնարկութիւնների համար ծառայողների ընդունելն ու արձակելը և նրանց վրայ հսկողութիւն ունենալը իրանց պարտականութիւնները ճշտիւ կատարելու համար։

զ) Տեղեկութիւններ հաւաքել ընկերութեանը օգնութեան դիմող անձնաւորութիւնների մասին և նրանց համապատասխան օգնութիւն տալ, ընկերութեան միջոցների համաձայն, հսկելով նրանց տուած նպաստների գործադրութեան վրայ։

է) Որքան կարելի է յաճախ ստուգել ընկերութեան գումարներն ու կայքերը։

ը) Ընկերութեան անդամների անուանացուցակներ պահել։

թ) Հսկել, որ անդամները ժամանակին վճարեն իրենց անդամակցական վճարները և ներկայացնել ընդհանուր ժողովին այն անդամների ցուցակը, որոնք չեն

տուել իրանց անդամակցական վճարները կամ որոնք ընկերութեան շահերը չեն պաշտպանել և գնել նրանց ընկերութիւնից հեռացնելու հարցը։

ժ) Սահմանել ընկերութեան հաշուապահութեան և գործավարութեան կարգերը։

ժա) Հսկել կանոնադրութեան գործադրութեան վրայ։

ժբ) Ընկերութեան անունով յարաբերութիւնների մէջ մտնել պատշաճաւոր տեղերի հետ, նմանապէս ներկայացնել պահանջներ և նման միջնորդութիւններ անել դատարաններում։

ժգ. Հրաւիրել ընկերութեան ընդհանուր ժողովներ։

ժդ. Կազմել և ներկայացնել ընդհանուր ժողովին ի հաստատութիւն տարեկան նախահաշիւներն ընկերութեան գումարների և գործունէութեան մասին։

ժե. Գործադրել ընդհանուր ժողովի որոշումները օրէնքներով թոյլատրուած բոլոր միջոցներով, նմանապէս կապելով զանազան տեսակ պայմաններ, ակտեր, տալով որոշուած հաւատարմագրեր և ստորագրելով չեկեր և ուրիշ դրամային թղթեր։

ժզ. Քննել առանձին անդամների յայտարարութիւնները։

ժէ. Ընդհանուր ժողովի քննութեան ներկայացնել այն հարցերը, որոնք ընդունուած են վարչութեան կողմից կամ որոնք նրա իրաւասութիւնից դուրս են։

ժը. Ընդհանուր ժողովին ներկայացնելիք բոլոր հարցերի նախնական քննութիւնը։

§ 29. Ընկերութեան բոլոր դուրս գնացած թղթերը ստորագրում են վարչութեան նախագահը կամ նրա տեղապահը, նմանապէս երկու անդամները, որոնց թուում և գանձապահը։

§ 30. Ընկերութեան նամակագրութիւնը վարելու, ընդհանուր և վարչութեան ժողովների արձանագրութիւնները կազմելու, ընկերութեան անդամների

այբբենական ցուցակները և նրան օգնութեան դիմող անձնաւորութիւնների ցուցակները, նշանակելով նրանց տուած նպաստների քանակը, վարելու համար դրսից հրաւիրուում է մի քարտուղար որոշ վարձատրութեամբ։

§ 31. Քարտուղարը պահում է թէ փողի և թէ ժամերեալի մուտքի և ելքի գրքերը և ստանում է մշտական վճարներն ու նուիրատուութիւնները, վարում է ամբողջ հաշուապահութիւնը, ներկայանում է վարչութեան իւրաքանչիւր ամսի մուտքի և ելքի տեղեկագիր, կազմում է տարեկան հաշիւ և վարչութեան կարգադրութեամբ, ընդհանուր ժողովի որոշումների համաձայն, կատարում է բոլոր փողային օպերացիաներն ու վճարումները։

§ 32. Ընկերութեան վարչութիւնը ընդհանուր ժողովի տուած հրահանգների համաձայն որոշում է գանձապահի մօտ մնացած փողերի, ապահովագրած պօլիսների, դօկումէնտների, թղթերի, գրքերի և զանազան արժողութիւնների պահելու կարգը։

§ 33. Ընկերութեան անդամները կարող են գալ վարչութեան ժողովները առանց վճռող ձայն ունենալու և անել իրանց ենթադրութիւնները ընկերութեան որև է գործի վերաբերեալ։ Եթէ վարչութիւնը այդ ենթադրութիւնները համարում է հիմնաւոր, ի նկատի է առնում նրանց, իսկ եթէ իրան իրաւասութիւնից դուրս է, ներկայացնում է ընդհանուր ժողովին քննելու համար. վարչութիւնը նոյնպէս պարտաւոր է ներկայացնել ընդհանուր ժողովին ընկերութեան որև է անդամի առաջարկը և այն ժամանակ, եթէ ինքը, վարչութիւնը, այդ առաջարկը մերժում է։

II Ընդհանուր ժողով.

§ 34. Ընդհանուր ժողովները լինում են սովորական և արտակարգ։ Սովորական ընդհանուր ժողովները

գումարում են իւրաքանչիւր տարին վարչութեան յայտարարութիւններով, որ արւում է ընդհանուր ժողովի գումարելու օրից երկու շաբաթ առաջ։ Արտակարգ ժողովները գումարում են, կարիք եղած ժամանակ, վճռելու այն անյետաձգելի հարցերը, որոնք վարչութիւնը թողել է չվճռած կամ որոնք նրա իրաւասութիւնից դուրս են,—վարչութեան որոշումներով, պատշաճաւոր իշխանութեան պահանջով, վերաստուգիչ մասնաժողովի և վերջապէս ընկերութեան անդամների ոչ պակաս քան 1/5 մասի գրաւոր յայտագրերով, այն դէպքում միայն, երբ այդ յայտագիրը ստորագրած կը լինեն ոչ պակաս քան քառասուն անդամ։

§ 35 Ընդհանուր ժողովները բաց է անում վարչութեան նախագահը, որից յետոյ ներկայ գտնւող անդամները ընտրում են իրանց միջից իւրաքանչիւր անդամ ընդհանուր ժողովի առանձին նախագահ։

Ծանօթ. Եթէ ընդհանուր ժողովում քննւում են վարչութեան ներկայացրած հաշիւներն և զեկուցւում գանգատներ նրա գործունէութեան մասին՝ նախագահ չի կարող լինել վարչութեան անդամներից և ոչ մէկը։

§ 36 Ընդհանուր ժողովները համարւում են կայացած, երբ մասնակցում են.

ա) Բոլոր անդամների երկու երրորդ մասը, երբ քննւում են ընկերութեան շարժական և անշարժ կայքերը գրաւ դնելու, նորը ձեռք բերելու, այն սեփականացնելու հարցերը, ընդհանրապէս փոխառութիւնների, սոյն կանոնադրութիւնը փոփոխելու, ընկերութեան կազմից հեռացնելու իրենց անդամակցական վճարները ժամանակին չտւող անդամներին կամ որոնց գործունէութիւնը չի համապատասխանում ընկերութեան շահերին և կամ հեռացրած անդամներին նորից ընդունելու հարցերը։

բ) Բոլոր անդամների կէս մասը, երբ քննւում են մնացած բոլոր հարցերը։ Եթէ վերոյիշեալ քանակութեամբ ընդհանուր ժողովում անդամներ չեն լինում, ժողովը չի կայանում, կարճ ժամանակից հրաւիրւում է երկրորդ ժողով, որը կայացած է համարւում ներկայ եղող անդամների թւից անկախ։

§ 37. Ընդհանուր ժողովում բոլոր հարցերը վճռւում են գաղտնի քւէարկութեամբ ձայների հասարակ մեծամասնութեամբ։ Ձայների հաւասարութեան ժամանակ, առաւելութիւն տրւում է այն կողմին, որին տալիս է իր ձայնը նախագահը։

Ծանօթ. Իւրաքանչիւր անդամ միայն մէկ ձայնի իրաւունք ունի։

§ 38 Ընդհանուր ժողովների զբաղմունքի առարկաներն են.

ա) Ընդհանուր ժողովի նախագահի, ընկերութեան պատւաւոր, համակրող, վարչութեան անդամների, վերաստուգիչ յանձնաժողովի, նրա փոխանորդների ընտրութիւնը և վարչութեան անդամներին ժամանակը չը լրացրած պաշտօնից հեռացնելու խնդիրը։

բ) Վարչութեան հաւար կազմած հրահանգների հաստատութիւնը և վավչութեան ու ընկերութեան միւս հիմնարկութիւնների հաւար ներքին կանոնադրութիւն որոշելը։

գ) Յաջորդ տարւայ նախահաշիւ և դրա մասին եղած վերաստուգիչ մասնաժողովի զեկուցումների հաստատութիւնը։

դ) Վարչութեան տարեկան հաշիւների քննութիւնն ու հաստատութիւնը և այդ հաշիւների ստուգելը, նմանապէս, կարիք եղած դէպքում, վարչութեան մուտքի և ելքի գրքերը ստուգելը վերաստուգիչ մասնաժողովի միջոցով։

ե) Որոշել այն նպաստի ամենաբարձր չափը, որ տրւում է արտակարգ դէպքերում վարչութեան նախագահի անձնական հայեցողութեամբ։

զ) Որոշել կանցելեարական ծախսերի համար գումարի քանակը։

է) Կանոնադրութիւնը փոփոխելու կամ լրացնելու և ընկերութեան գործողութիւնների փակելու հարցերը։

ը) Թոյլ տալ վարչութեան ձեռք բերել կամ սեփականացնել անշարժ կալքեր, վարձել բնակարան, բաց անել գրադարաններ, իր սեփական լրագիր հրատարակել ընդհանուր ժողովում որոշած ծրագրով և այս կամ այն փոխառութիւն կնքել։

թ) Որոշել այն հարցը, թէ ընկերութեան դրամագլուխներով որ տոկոսաբեր թղթեր պէտք է ձեռք բերել։

ժ) Որոշել այն գումարների քանակը, որով ընկերութեան վարչութիւնը իրաւունք ունի կապել պայմաններ և հաստատել պայմանների նախագիծը ամենամեծ գումարների համար։

ժա) Ընկերութեան կազմից հեռացնել ինչպէս իրանց անդամակցական վճարները չտուող անդամներին, նմանապէս նրանց, որոնց գործունէութիւնը չի համապատասխանում ընկերութեան շահերին, այլ և ընդունել ընկերութեան հեռացրած անդամներին։

ժբ) Զանազան առաջարկութիւնների քննութիւնը ինչպէս ընկերութեան անդամների, վարչութեան և վերաստուգիչ մասնաժողովի, ընդհանրապէս ընկերութեան գործունէութեան մասին, նմանապէս և մասնաւոր անձնաւորութիւնների ընկերութեան անդամների հետ յարաբերութիւնները հարթելու հարցերի մասին և այդ առաջարկութիւնները ընկերութեան վարչութեան միջոցով ի կատար ածելը։

ժգ) Այն բոլոր հարցեր վճռելը, որոնք վերաբերում են սոյն կանոնադրութեամբ որոշած ընկերութեան նպատակներին և նրա ապագայ գործունէութեան լայնացնելու միջոցների քննութիւնը։

Մանաթ. Ընդհանուր ժողովները կարող են քննել միայն այն հարցերը, որոնք պատկանում են կանոնադրութեամբ որոշած ընկերութեան անմիջական գործունէութեանը։

§ 39. Իրաքանչիւր ընդհանուր ժողով քննում է միայն այն հարցերը, որի համար նա գումարուած էր։

§ 40. Վերաստուգիչ մասնաժողովը կազմուած է ամեն տարի ընդհանուր ժողովում ընտրած անդամներից։ Ընդհանուր ժողովում ընտրւում են և նրանց 3 փոխանորդներ, որոնք փոխարինում են մասնաժողովի անդամներին նրանց հիւանդութեան կամ երկարատև բացակայութեան ժամանակ։

Մանաթ. I Վերաստուգիչ մասնաժողովի անդամները ծառայում են առանց վարձատրութեան։

Մանաթ. II Վարչութեան անդամը չի կարող միաժամանակ լինել և վերաստուգիչ մասնաժողովի անդամ։

§ 41. Վերաստուգիչ մասնաժողովը պարտաւոր է միշտ ստուգել ընկերութեան գումարները, կալքերն և գրքերը։ Նրա պարտականութիւնն է նպանապէս ստուգել վարչութեան կազմած ընդհանուր ժողովին ներկայացնելիք տարեկան նախահաշիւը, որը պէտք է ներկայացուի մասնաժողովին ընդհանուր ժողովից երկու շաբաթ առաջ, որտեղ պէտք է նախահաշիւը հաստատուի։

Մանաթ. Վերաստուգիչ մասնաժողովը երկու անդամից ոչ պակաս իրաւունք ունի իր հայեցողութեամբ կամ ընկերութեան անդամների գրաւոր պահանջով յանկարծակի ռէվիզիա անել։

§ 42. Մասնաժողովի անդամները վերաքննութեան մասին ստուգած գրքերում նկատողութիւններ են անում, և անկանոնութեան երևան գալու դէպքում, պարտաւոր են արտակարգ ընդհանուր ժողով հրաւիրել։

Զ. Ընդհանուր կանոնները

§ 43. Ընկերությունը գտնվում է ներքին գործերի մինիստրության իրավասության տակ։

§ 44. Ընկերության անդամները վարչությունից կարող են ստանալ տոմսակներ և կամ տիպլոմներ, որ նրանք գտնվում են այդ ընկերության մէջ։

§ 45. Սոյն կանոնադրությունը փոփոխելու կամ լրացնելու համար հարկավոր է պատշաճ թոյլտվություն։

§ 46. Ընկերության գումարների և գործունէության մասին կազմած մանրամասն հաշիվները ընդհանուր ժողովում հաստատելուց յետոյ, անյապաղ տարին լրանալուց յետոյ ներկայացվում է որոշված քանակությամբ և կարգով պատշաճավոր իշխանությանը։ Բացի դրանից նոյն կարգով ներկայացվում է որոշած ձևով ընկերության տարեկան հաշիվներից քաղած կարճառոտ քաղվածքները, նրա իրավասության տակ գտնված հիմնարկությունների ադմինիստրացիայի կազմի մասին։

§ 47. Հաշվետվական տարին համարվում է յունվարի 1-ից մինչև միւս յունվարի 1-ը։

Է. Ընկերության խափանումը

§ 48. Եթէ որևէ պատճառով ընկերությունը կը վերջացնի իր գործունէությունը, նրան պատկանող բոլոր կապիտալներն ու առհասարակ բոլոր կայքերը, որոնք լիկվիդացիայից յետոյ մնացած կմնան, անցնում են Թիֆլիսի Առևտրական [illegible]-ին։

ZOUR-ԱՍՍ.ՍՍՀ
Գ. Ա. Մ[illegible]

2013
<< Ազգային գրադարան
NL0043567

Н АРМ.
2-475 дс